

ՄԵՐԿԻ ԴՐ-ՄԵՐԱՏԻՓՈ

ԱՂՄԿԱՅՈՅԶ ԳԱՐ

[Թարգմանեց]

Ե. Ս. Տէր-Մուշեղի Հլիստ

ՀՐԱՄԱՐԱԿԵՑ 9. ԵՎՀԵԱՆՑ

84

Մ-88

Բ. Ա. Ք. Ա. Ի.

Տարբան Ա. Անոնեանի

1903

84
U-88

ՄԱՐԿ ԳԵՐԵՎՈՆԻ ՏԻՊ

20 APR 2006

19 NOV 2010

մր.

987
ԱՂՄԿԱՅՈՅԶ ԳՈՐԾԼ

Թարգմանեց

Ա. Ա. Տէղ-Մանուկյան



ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Զ. ԵՊԻԵԱՆՑ



Բ Ա. Ք Ո Ւ

Տպարան Ա. Անտոնիանի

1903

04.07.2013

6797

ՅԱՐԳԱՆԱՑ ՆՈՒՐ

ՄԵԺ-ԱՊԱՏԻ ՊԱԲՈՒՆ

ՄԵԺ-ԱՊԱՏԻ ՊԱԲՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Մ. Յ. ՊԱՊՈՎԵԱՆՑԻՆ

Ի ՅԻՇ ԱՑԱԿ

Дозволено Цензурою. 21 Февраля 1903 г. Тифлисъ.

ԻԻՐ ՈՒԽՈՒՑՉԱԿԱՆ ՔԱԱՆԵՀՀԻՆՔԱՄԵԱՑ

արդիւնաւոր գործունէութեան

ՀՐԱՏԱՐԱԿՐՑ



42 m

Ա.Ղ.ՄԿԱՅՈՅԶԳ ԳՈՐԾԸ



Դատարանի դահլիճն է: Ներս են բերում
մեղադրեալին, որը քսանեհինդ տարեկան մի
սեահեր երիտասարդ է՝ ամուր մարմնակազմով
և վճռական հայեացքով: Նա անցնում է հան-
գիստ գնացքով, սեղմում է իւր փաստաբանի՝
պ. Զ.-ի ձեռքը, գլուխ է տալիս դատաւորին և
նստում է: Վկաներին հարց ու փորձի ենթար-
կելուց յետոյ, նախագահը խօսելու իրաւունք է
տալիս պ. Զ.-ին և անա, ընդհանուր լուսնական
մէջ լաւում է փաստաբանի ձայնը.

— Պարոնսայք դատաւորներ և երդուեալ-
ներ.

« Հարիւր տարին մի անգամ, ոչ աւելի,
պատահում են այնպիսի ոճիրներ, որպիսին
այժմ դուք դատում էք: Զեր առաջ կանգնած է
մի մարդ, որը գիտէ, թէ ձեզնից է կախուած իւր
ապրելը կամ մեռնելը և հանգիստ խղճով ու

հոգու անդորրութեամբ սպասում է ձեր վճռին։
Բայց չը կարծէք, թէ նրա գէմքի վրայ արտա-
ցոլուած է յոյսը՝ թէ իրեն կարդարացնեն, ոչ,
նա այդ չի ցանկանում, այլ նա միայն գիտակ-
ցում է իւր վարմունքի արդարացիութիւնը։ Նա
գիտէ, որ ինքն սպանել է և առանց զարհու-
րանքի նայում է այն բանին, ինչ որ կատարել
է—նա սպանել է իւր մօրը և նրա գէմքը չի գու-
նատուամ։ Սակայն նա ցինիկ չէ, նա չէ պատկա-
նում այն պարծենկոտ մարդասպանների թուին,
որոնց պաշտպան է հանդիսանում Փարիզի հո-
գեբանութիւնը։ Նա չի նմանում այն ֆանֆա-
րօն-մարդասպաններին, որոնց համար սպանու-
թիւնը խաղալիք է։ Քօլէջում նա ձեր որդինե-
րի հետ միենոյն նստարանի վրայ է նստած
եղել… Գուք չորհաւորել էր նրա ուսանողա-
կան յաջողութիւնները և, շատ կարելի է, քննու-
թիւններից յետոյ սեղմել էր նրա ձեռքը։

«Ի՞նչն է եղել պատճառը՝ կատարելու այդ
սոսկալի յանցանքը, որը մի վայրկեանում փա-
ռաւոր ապագայ խոստացող երիտասարդին փո-
խարկեց ոճրագործի։ Օ՛, պատճառը կը կամ
խելացնորութեան մէջ մի վնտուէք, այլ դիմե-
ցէք աւելի շուտով պատուի զգացմունքին, պա-
տուի կուտին, որը, որպէս նախնական դա-
շանանք, ստեղծում է նահատակներ, ֆանա-

տիկոսներ, մարտնչողներ…

«Լուի Փիլիպէրի իսկական ազգանունն
Փիրօդո։ 1885 թուին, տասն տարեկան հասա-
կում նա մտաւ նիմի քոլէջը, որտեղ եկել է
իւր մօր հետ, որը գեռ բաւականին երիտա-
սարդ էր։ Մայրը հագնուած էր պարզ կերպու-
և երեսում էր, որ պատկանում էր ամենայար-
գելի կանանց թուին։ Որդուն գրած նրա բո-
լոր նամակները համակուած էին խիստ ջերմ
սիրով, որը պաշտաման էր համառում, ուստի և
բոլորն էլ զարմանում էին, որ նա ուշուց էր
այցելում որդուն՝ տարուայ մէջ միայն երկու
անգամ։ Ամառուայ արձակուգներին ժիլլէրը
մնում էր քոլէջում և յաճախ գննդատուամ էր,
որ ինքը միւս ընկերների նման չի կարողա-
նում անցուցանել Փարիզում այդ ժամանակը,
սակայն մայրը այդ մասին արած նրա բոլոր
խնդիրներին մերժումով էր պատասխանում։
Այդ կինը, որ աւելի քնքոյց խօսքեր չէր ճա-
րում որդու վերաբերմամբ ունեցած իւր սէրն
արտայատելու, չէր թոյլ տալիս նրան նոյն իսկ
խօսք բացելու այդ մասին։ Բարձր դասարան-
ների աշակերտների մէջ ստեղծուեցաւ նրա մօր
մասին մի առասպել։ Նրանք վճռեցին, թէ
Լուիի մայրը ատօրինի կերպով կենակցում է
ուրիշի հետ… և հէնց որ երեան եկաւ այդ ա-

ուակը, սկսուեցան ասէկօսէններն ու դատողութիւնները:

«Այն աշակերտների ծնողները, որոնց մօտ գնում էր Լուին, յուզուեցան և ճշմարտութիւնն իմանալու համար գիմեցին դպրոցի գլխաւոր զեկավարին: Սա պատասխանեց, թէ երբէք որ և է վատ բան չէ լսել տիկին ժիւբէրի մասին և որ նա երկրորդ անգամ ամուսնացած չէ ու որ և է մէկի հետ ապօրինի կապ չունի: Որդին նամակներն ուղարկում էր մօրը Փարիզի մօտ ունեցած իրենց կալուածքը: Դպրոցի ղեկավարը սխալուել չէր կարող: Երբ մենք, աշակերտներս, հարցնում էինք Լուինի իւր մանկութեան մասին, նա մեծ սիրով նկարագրում էր իւր մայրական տունը, այնտեղ անցուցած իւր կեանքը, և այդ կեանքի բոլոր մանրամասները ցոյց էին տալիս, թէ որքան սիրելի յիշատակներ կան նրա սրտի մէջ: Լուին ասում էր մեզ, թէ ինքը քնում էր մօր սենեակում, պատմում էր իւր պառաւ դայեակի մասին, որը մնում էր իւր հետ, երբ մայրը զնում էր ուրիշ տեղ, ինչու որ դեռ այն ժամանակ էլ մայրը յաճախ թողնում էր նրան մենակ: Պատմում էր բազմաթիւ խաղավիճների, պատկերների և գրքերի մասին, որոնցով լցուած էին նրա դարակներն ու պահարանները:

«Ոչ ոք մեղնից չէր յայտնում Լուինի իւր կարծիքը, սակայն մենք հաստատապէս համոզուած էինք, որ նա ապօրինի զաւակ էր՝ բոլորովին հակառակ այն բանին, որ աշխատում էր ներչնչել մեզ մեր զիսաւոր դաստիարակը և մեղադրում էինք Ժիւբէրին այն զաղտնիքի համար, որը բօղարկում էր նրա ծագումը: Ճուտով նրա մէջ նկատուեցաւ մի ինչոր խռովութիւն, նա զարձաւ մռայլ, սկսեց ձգտել միայնութեան, փախչում էր ընկերներից՝ ինքն էլ շը հասկանալով, թէ ինչու և այդպէս էլ աւարտեց փիլիտոփայութեան դասընթացը:

«Լուի Ժիւբէրի՝ քօլէն աւարտելուց երկու տարի յետոյ ես պատահեցի նրան Լատինական արուարձանում: Ես այդ ժամանակ աւարտել էի իրաւաբանական ֆակուլտէն, իսկ նա նոր սկսել էր բժշկականութիւն սովորել: Ինձ թուեցաւ, որ Լուին աւելի տխուր էր այժմ: Երբ նա խօսում էր, նրա աշքերն անբնական կերպով չուում էին և թուռմ էր, թէ նրա հայեացքն ուղում էր թափանցել մռայլ ապագայի մէջ: Սակայն ոչ մի դժբաղգութիւն չէր պատահելնրան: Հագուստին նայելով, Լուին աւելի քան լաւ էր ապրում նիւթականի կողմից, բայց ակնյայտ էր, որ նա չէր օգտառում հարստութեան չնորհից: Ես խօսեցի նրա հետ

մօր մասին:

«—Ա՛խ, բարեկամս,—զերմութեամբ ասաց նա, —ինչքան ապերախտ էի ևս նիմում գտնուածս ժամանակ, որ աշխատում էի թափանցել նրա կեանքի զաղտնիքը: Խեղճ կինը խոստվանեց ինձ, որ կառավարում է մի մեծ արդիւնաբերական ձեռնարկութիւն, որի մէջ գեռ շատ վազուց նա զրել է իւր ամբողջ դրամագլուխը: Հէնց այդ է եղել պատճառը նրա յաճախակի տնից հեռանալուն, յանկարծակի և անբացատրելի վերապարձներին: Եյդ բոլորի հիման վրայ էին մեղադրում նրան, սակայն էապէս դրանք կապուած էին նրա դժուարին գործի հետ, որն այնքան ժամանակ և հոգսեր էր պահանջում:

«—Բայց ինչո՞ւ, —հարցրի ես, —նա այդպէս ուշ է բացատրել ձեզ այդ բոլորը: Եթէ այն ժամանակ, երբ գուք ապլում էիր նիմում, նա ասէր ձեզ իւր պարապմունքների մասին, ապա բոլորն էլ յարգանքով կը վերաբերուէին նրան և հասարակական կարծիքը նրա մասին կը գաղաքէր աննպաստ լինելուց:

«—Մայրս կատարեկապէս իրաւունք ունի ասելու, թէ ոչ որ իրաւունք չունի թափանցելու նրա կենցաղի մէջ:

«—Ի հարկէ, բայց...

«—Բացի այդ, —աւելացրեց նա աւելի և եռանգով, —նա հպատակում է կեղծ ամօթի զգացմունքին, որ գովելի է և ստիպում է մի կարգ կանանց ծածկելու մի կտոր հացի համար իրենց յանձն առած աշխատանքը, երկիւղ կրելով, որ հասարակութեան մէջ կարող են նայել նրանց, որպէս զիրքը կորցրած մարդկանց վրայ:

«Դրան ես ոչինչ չը պատասխանեցի: Սեպհական արժանապատւութեան զգացմունքը թէկուզ չափազանցրած լինի այն, միշտ յարգելի է: Բացի այդ, ես ուրախ էի, որ ցրուեցան իմ կասկածները: Ես սկսեցի ամաչել, որ կասկածել եմ տիկին ժիլբէրի վրայ և որուեցի բարեկամական յարաբերութեամբս քաւել իմ զաղանի յանցանքը:

«Լուիի սառն արտաքինի տակ գտնուում էր մի քնքոյշ և բարի սիրոտ: Պատահելով նրա հետ յաճախս, անկարելի էր չը նկատել նրա մեծահոգութիւնը, կեղծելու անընդունակութիւնը և նոյնպէս այն, որ նա անկարող էր իւր յարաբերութիւնների մէջ առաջնորդուել նիւթեկան շահերով: Ուրեմն ինչն էր պատճառն այն սարսափելի վշտին, որն ուղղակի հալում էր նրան: Ո՞ր անազնիւ կինն էր կանգնել այդ արարածի ճանապարհին, որը ստեղծուած է նրա համար, որպէսզի ծնկաշոք պաշտէ իւր սիրա-

ծին: Իմ հարցին նա պատասխանեց կատարեալ անկեղծութեամբ:

«—Գուրք սխալում էք, սիրային կապ ես չունիմ: Բոլորի նման ես էլ յափշտակուել եմ կանանցով, բայց ես սիրուհի չունիմ:

«—Ինչու էք հրում գուք այդ զգացմունքը ձեզնից, որ կարող է աւելի շափով տիրապետել ձեղ, քան մի ուրիշին:

«—Ուղղակի նրա համար, որ ձեր ասած կանանցից ոչ մէկը չի դիւր եկել ինձ, իսկ նրանք, որոնց վերաբերմամբ ես սէր եմ տածել, դրանք էլ երես են դարձրել ինձանից:

«—Զեմ հաւատում:

«—Կուգէք, կապացուցեմ: Գուրք ճանաշնում էք օրիորդ գլ-Գարդին:

«—Գնդապետ գլ-Գարդի աղջկան, որը թէկ աղքատ, բայց յարգելի մարդ է:

«—Հինց նա ինքը: Ես գործադրեցի ամեն միջոց, որպէսզի մերձենամ նրանց հետ... օրիորդի հետ: Գնդապետի նիւթական գրութիւնը թոյլ էր տալիս ինձ մտածելու, որ նա չէր կասկածիլ, թէ ես իւր աղջկայ օժիտի վրայ աշը ունեմ: Իրաւոնք ունէի ես այդպէս մտածելու:

«—Ի հարկէ, յետո՞յ:

«Լուին ոյժ գործ դրեց իւր վրայ և շրունակից.

«—Յետո՞յ: Մի անգամ երեկոյեան ես գընդապեաին տեսայ իւր աղջկայ հետ Օդէօնի հրապարակում և ուղղուեցայ նրանց կողմը, իսկ գլ-Գարդը, տեսնելով իմ դիտաւորութիւնը, աշխատում էր խուսափել հանգիպումից, առանց այդ բանն զգալ տալու ինձ: Ես ցանկացայ որոնել նրան, որպէսզի բացատրութիւն խնդրեմ, բայց ամբոխի մէջ չը կարողացայ գտնել նրան: Ես ուղղուեցայ գլ-Գարդի ընակարանը, որ Cassette փողոցումն է գտնեռում: Ինձ ասացին, որ երկու օր առաջ նա տեղափոխուել է ուրիշ տեղ, առանց իւր նոր հասցէն թողնելու:

«—Իսկապէս տարօրինակ բան է այդ: Բայց այդ բոլորը կարող է մի հասարակ թիւթիմացութիւն լինել, որը չը պէտք է ազդէ ձեր կեանքի վրայ:

«—Եթէ գլ-Գարդի հետ պատահած դէպքը միակը լինէք, ես կարող էի համաձայնուել ձեզ հետ, բայց տեսէք...—Նա նորից խորը հառաշեց,—տեսէք, միննոյնը կրկնուել է ամեն անգամ, երբ ես մերձեցել եմ մի որ և է ընտանիքի հետ և յոյս եմ ունեցել այդ ընտանիքի անդամը լինելու: Սկզբում ինձ ընդունում էին վերին աստիճանի սիրով, խրախուսում էին, թուի թէ բաւականութիւն էին գտնում իմ այցելութիւնների մէջ, բայց չէր անցնում երկու-երեք շա-

բաթ և ինձ փայփայող ընտանիքն սկսում է ո
հեռանալ, խուսափել ինձանից և մինոյն ժա-
մանակ միջոց չէր տալիս հարցնելու այդ փո-
փոխութեան պատճառը:

«Նեարդային գողն ստիպում էր դժբաղդ
երիտասարդի ատամներն իրարու զարնուելու,
դէմքի կուշ եկած մկանունքների կաշին սար-
սափելի կերպով ձգւում էր: Նախին կասկած-
ները նորից զարթնեցին իմ մէջ: Ես յիշեցի
տիկին ժիլրէրի խորհրդաւոր այցելութիւնների
մասին եղած խօսքերը և ինձ կրկին թուեցաւ,
որ Լուիից այդպէս տարօրինակ կերպով խու-
սափելու գաղտնիքը այդ կնոջ մէջ պէտք է
վինտուել: Սակայն, մտածելով քիչ, ես ցրուի՝
այդ կասկածները: Ինչքան և մեծ լինին
յանցանքները, քանի որ նա այդ յանցանքը
բացարձակօրէն չի գործել, դրանք չէին կարաղ
գրգռել երիտասարդի դէմ այդպիսի ատելու-
թիւն: Նրա դիրքն ունեցող կինը, ի հարկէ,
ամեն միջոց, ամեն խորամանկութիւն գործ կը
դնէր, որպէսզի ծածկէ իւր արագները, բայց
եթէ այդ արարքներից մի որ և է մաս երիան
է եկել, ապա այդ մասին մարդկանց խիստ
սահմանափակ թիւ կարող էր իմանալ, ուրեմն
բարեկամիցս հասարակութեան փախչելը չէր
կարող դրանով բացատրուել: Այն բոլորի մէջ,

պարզնայթ, ինչ որ ես զիտէի, այնքան արտա-
սովոր բան կար, որ ես ակամայ հարց էի տա-
լիս ինձ. «Արդեօք, Ժիլրէրը խելափար չէ»:
Չուտով իմ կասկածներն աւելի ուժեղացան:

«Ես ապրում էի Շատուի շրջակայրում և
ցանկացայ այցելել Լուիին: Օրը կիրակի էր և
ես զիտէի, որ նրան տանը կը գտնեմ: Յիրա-
ւի, չուտով ինձ տարան սեղանատունը: Այ-
տեղ, պարմնայթ, ինձ սպասում էր այն տպա-
ւորութիւններից մէկը, որոնք մարդու ամբողջ
կեանքի ընթացքում չեն մոռացւում: Ես տե-
սայ Լուիի մօրը և իմ առջև պատկերացաւ մայ-
րական սիրոյ ամենամաքուր և կատարեալ օ-
րինակը: Այդ կնոջ լիզոն, շարժուածքները, ա-
ռ ինչ ցոյց էր տալիս, թէ նա սովորած է
սարհային կեանքին, իսկ նրա հայեացքը, որ
ուած էր որդու վրայ, ցոյց էր տալիս, որ
նա ունէր միայն մի զերազոյն ձգառում—շրջա-
պատել որդուն ամեն յարմարութիւններով և
մի շոցներ տալ նրան ճաշակելու կեանքի բոլոր
ուրախութիւնները: Իմ կարծիքն աւելի ամրա-
պնկուեցաւ, երբ իմ այնտեղ գնալուց մի ժամ
անցած նա վեր կացաւ և պատրաստուեցաւ գնա-
լու:

«—Դու արդէն գնո՞ւմ ես, մայրիկ:

«—Այն, հարկաւոր է:

«—Ա՞խ, այս... ամսի վերջն է:

«Մայրը բարկացաւ և շփոթուեցաւ: Լուիին շտապեց ուղղել սխալը:

«—Անգին մայրիկս,—ասաց նա, գրկելով մօրը,—ես մոռացայ ինձ և դու բարկացար, բայց ԶՀն իմ բարեկամս է, նա զիտէ, թէ դու ինչ ես անում ինձ համար և, կարող եմ երդուել, որ նա չի մատնիլ մեր զալանիքը:

«—Հաւատացէք, տիկին,—ասացի ես իրը յուղմամբ, ես ինձ անազնիւ մարդ կը համարեմ, եթէ երբ և է զէթ մի խօսք ասած վինեմ այն մասին, ինչ որ զիտեմ:

«—Ես հաւատում եմ ձեզ,—հանկստացած ասաց տիկին Փիլլերը,—բայց Լուին զիտէ, թէ ինչպէս ես... ստիպուած թագժնում եմ իմ պարապմունքները: Նա շը պէտք է խօսէր այդ մասին:

«Իսկ երբ Լուին նորից սկսեց արդարանալ, մայրը ծածկեց նրա բերանն իւր գեղեցիկ ձեռքով:


«—Բաւական է, զաւակս: Միթէ մեզ համար միենոյն չէ, թէ ինչ կասեն կամ կը մտածեն մեր մասին: Սակայն միւս անզամ շը խօսես այդ մասին: Ամենքը չեն նմանիլ բարեկամիդ և աշխատանքն էլ բոլորովին այնպէս չի յարգւում, որպէս դու ես կարծում, մանաւանդ

երբ աշխատում է մի մարդ, որը հասարակական սանդուղքի որոշ աստիճանի վրայ է կանգնած:

«Ասելով այդ խօսքերն առանց որ և է խառնութեան, տիկին Փիլլերը մնաք բարով ասաց մեզ և զնաց, շը թոյլ տալով մեզ նոյն խոկ մինչկ կայարան ճանապարհ գնելու իրեն:

«Գիշերի մնացած մասն ես անցուցի Լուիի հետ, զարմացած այն ամենի վրայ, ինչ որ տեսել և լսել էի: Ես երևակայում էի, որ յանձնն տիկին Փիլլերի ես կը տեսնեմ ցոփութեան քրջանն անցած մի կնոջ, մինչգեռ իմ տեսածը մի կին էր, որը մարտնչում էր կեանքի դէմ, որը լի էր սեպհական արժանապատութեան զգացմամբ: Նրա ներկայութեամբ իմ հոգին հանգիստ չէր, սիրտս սաստիկ զործում էր և նրա մասին ունեցածս բոլոր կասկածները յօդս ցնդեցին: Ես չէի համարձակուում իմ տպաւորութիւններն հաղորդել որդուն, բայց նա հարցրեց.

«—Գուք տեսնում էր, թէ ինչպիսի մարդիկ ենք մենք. բացատրեցէր ինձ, ինչու հէնց որ ես մօտիկանում եմ մի որ և է ընտանիքի և ցանկութիւն եմ յայտնում անդամ դառնալու այդ ընտանիքին, ինձ փանդում են:



«Հարցն անլուծելի էր:

«—Խոստանում եմ ձեզ՝ իմանալ դրա պատճառը: Գնդապետ դը-Քարդը միշտ էլ չի կարող անյայտ մնալ: Ցանկանում էր, ես կը տեսնուիմ նրա հետ և կը հարցնեմ, թէ ինչո՞ւ նա այդպէս տարօրինակ կերպով է վարուել ձեզ հետ:

«—Ուզնամ եմ,—Լուին լուռ կեցաւ և, գլուխը կախելով աւելացրեց.—Նա ձեզ կը պատասխանէ այն, ինչ որ ուրիշներն են ասել միջնորդների միջոցով, որոնք իմ կողմից գնում էին նրանց մօտ, այն է՛ թէ ազգիկն ինձ չի համակրում, ուստի և չի կարող ընդունել իմ առաջարկութիւնը:

«—Եւ ձեր միջնորդները միշտ էլ այդ ձեռվ են մերժումն ստացել:

«—Երբեմն քիչ փոփոխած: Այս, աշ, ներեցէք... քիչ էր մնացել մոռանայի... Բարեկամներիցս մէկը մենամարտութեան է գուրս եկել իմ ուղած աղջիկներից մէկի եղբօր հետ: Եւ ես միշտ էլ հաւատացած եմ, որ Ժակ Լեֆկրը (բարեկամիս անունն այդպէս է) մենամարտութեան է գուրս եկել իմ պատիւը պաշտպանելուն համար, թէի նա հաւատացնում է, որ դա ոչ մի առնչութիւն չունի ինձ հետ: Մենամարտութեան արձանագրութիւնը հաստա-

տեց նրա խօսքերը, ուստի և ես էլ իրաւունք-չունէի շարունակելու հարց ու փորձը:

«—Հաւատացնում եմ ձեզ,—ասացի ես,—որ եթէ երբ և է ես էլ կատարելու լինեմնման տեսակ յանձնարարութիւն, ինչ որ Լեֆկրն է կատարել, ապա ինձ էլ նոյնպիսի մուլճն մերժումով ճանապարհ կը դնեն...

«—Ուրեմն ինչպէս անել:

«—Ես վճռական բացատրութիւն կը պահանջեմ և գուր ամեն ինչ կիմանաք:

«—Ուրեմն,—ասաց նա, —գուր ենթադրում էր, թէ Ժակ Լեֆկրը ծածկում է ինձանից մերժման պատճառը:

«—Այս,—ասացի ես, նայելով ուղիղ նրա դէմքին:

«Նա չը ցնցուեցաւ, այլ միայն թախծութեամբ արտասանեց.

«—Ես միշտ էլ այդպէս էի կարծում:

«Սեղմելով նրա ձեռքը, ես հեռացայ: Այդ օրուանից, պարզներ, իմ մէջ ծնունդ առաւ մի նպատակ, որից ոչ ոք չէր կարող բաժանել ինձ, այն է՛ ինչ և լինի, անպատճառ իմանամ գրժագր Լուի Ժիլբէրի կեանքը դառնացնող գալունիքը: Երբեմն-երբեմն ես հեռուից-հեռու դիտում էի բարեկամիս կեանքն իւր բոլոր մաներամաներով հանդերձ: Ես մտածում էի ինքս

ինձ, թէ նրա չափազանց ամօթխածութիւնը, անկասկած, հարկադրում էր մարդկանց մտածելու, թէ նա պատճառնիր ունէր իրեն հասարակութիւնից հեռու պահելու: Մերթ ընդ մերթ ինձ թւում էր, թէ Լուին ցնդուած է և այդ միտքն ամբանում էր իմ մէջ մահաւանդ այն ժամանակ, երբ նա պատմում էր ինձ այնպիսի փաստեր, որոնք հնարովի էին թւում ինձ: Հարկաւոր է Կող Բերնարի նման զիտնական լինել՝ վերլուծելու համար պարիայի գերում գտնուող մարդկանց տարօրինակ զգացումները: Ամենափորբիկ վրդովմունքի ժամանակ պարիան զգում է, թէ ինչպէս իւր ստամոքսը կուչ է զալիս, արինը կանգ է առնում երակներում և շրթունքները գունաւում են: Նա երեսը շուռ է տալիս մինչև անգամ անծանօթ մարդկանց պատահելիս, ինչու որ, խեղճին թւում է, թէ իւրաքանչիւր քայլափոխում իրեն պէտք է վիրաւորեն: Նոյն իսկ զահել աղջիկների անմեղ հայեցրի մէջ նա ծազր է տեսնում: Նրա սիրտը միշտ գործում է անսովոր ուժով: Պարիան ձգտում է միայնութեան մոլիունդ ուխտաւորի նման, որը տաճարի մէջ վիտուում է մութ անկիւն և նստում բարորից հեռու, որպէսզի նայի բոցավառուղ մոմերին, Փրկչի խոցուած մարմնին և առհասարակ տանջանքի պատկերներին...

«Ահա թէ ինչ էր ասում ինձ Լուին և նրա սրտառուշ խօսքերը կրկին յուզում էին ինձ:— Սակայն ես առիթ ունեցայ համոզուելու, որ նա ցնդուած չէր, ինչպէս ես էի կարծում:

«—Ախ, բարեկամս, —ասաց միանգամ նա, զրկելով ինձ,—գուշակեցէք, թէ ում եմ տեսել: Զէ, գուք երկար կըմտածէք, հարկաւոր չէ. օրիորդ դը-Քարդին:

«—Միթէ, —հարցրի ես ժպտալով, երբ տեսայ նրա գէմքի վրայ արտայալուած ուրախութիւնը, որ փոխել էր դժբաղդ երիտասարդի կիրապարանը:

«—Ես ոչ միայն տեսել եմ նրան, այլ և հասկացել եմ նրա հայեցքից, որ նա անման է իւր հօր անգութ վարմունքի մէջ: Ես մինչև անգամ վճռեցի, թէ անկարելի բան եմ երեակայել, մի խօսքով ինքս ինձ ասացի, թէ միայն իմ երեակայութեանս մէջն ին մարդիկ խուսափում ինձանից...

«—Տեսնում էք, իմ սիրելի Լուի, —նկատեցի ես,—գուք ինքներդ խոստավանում էք, որ սխալուել էք: Է՞ն, գուք պատեցիք ինձ մի մեծ անհանգստութիւնից: Ես կարծում էի, թէ գուք անբժշկելի էք:

«—Գուք ինձ ցնորուած էիք համարում:

«—Հմ... համաձայնեցէք, որ եթէ գուք

իմ տեղը լինէիք, միևնույնը կը մտածէիք:

«—Ճատ կարելի է: Այժմ պատասխանեցէք ինձ. համաձայն էք իմ կողմից գնալու զընդապետի մօտ: Ինքս չեմ գնում, ինչու որ մայրսի խստ կը վշտանայ, երբ իմանայ իմ նոր փորձի մասին: Ես չեմ ցանկանում տանջել նրան. խեղճին այնպէս վախեցնում են իմ անյաջողութիւնները...»

«—Եթէ ուզում էք, ես հէնց այսօր երեկոյեան կերթամ Cassette փողոցը:

«—Եւ ասացէք դը-Գարդին, որ եթէ թիւրիմացութիւն պատահած չը լինէր, ես արդէն վաղուց խնդրած կը լինէի նրա աղջկայ ձեռքը: Սակայն,—աւելացրեց նա քիչ լուելուց յետոյ, — ես արդէն հօրից խնդրել եմ աղջկայ ձեռքը. դա հալիւախնախօն չէ... Ես առաջարկութիւն արի և հէնց այն օրից նա սկսեց խուսափել ինձանից: «Ժիլբէրը խորասուզուեցաւ մտքերի մէջ, խսկ նրա գէմքը մռայլուեցաւ:

«—Բաւական է, բաւական է, իմ սիրելի Հուի, — ասացի ես, — թողինենք առասպելները: Զեղ հրել են միմիայն այն պատճառով, որ լաւ չեն ճանաշել: Օրիսրդ դը-Գարդը նայում էր ձեզ բարեհաճութեամբ և այդ ցոյց է տալիս, որ կամ ձեր առաջն առաջարկութիւնը չի հասկացուել և կամ ձեր վերաբերմամբ ունեցած

զգացմոնքները փոխուել են: Ուրիշ լինչ պէտք է լինի որ:

«—Այդ ճիշտ է, — ասաց նա մի այնպիսի եղանակով, որ կարծես ուզում էր ինքն իրեն համոզել: — Ե՞րբ կը գնաք գնդապետի մօտ:

«—Եզրոց առաւոտեան: Մնվայել կը լինէր, եթէ այսօր իսկ երեկոյեան գնայի նրա մօտ:

«Լուին հեռացաւ: Թւում էր, թէ նա պատրաստ էր աւելի շատ բաներ ասելու և միայն հեռանալով կարող էր այդ ցանկութեան առաջնառնել:

«Հետեւեալ օրն ես ճանապարհուեցայ գընդապետի մօտ, ոչ թէ նրա համար, որ պաշտօնապէս խնդրէի նրա աղջկայ ձեռքը Լուիի համար (զա տիկին Ժիլբէրի գործն էր), այլ այն նպատակով, որ իմանայի, թէ ինչպէս կը վերաբերուի դը-Գարդը իւր աղջկայ և Լուիի ամուսնութեան մտքին:

«Ինձ զիմաւորեց մի մարդ, որի իւրաքանչիւր շարժումը իւր ազնուատոհմ ծագումն էր վկայում:

«—Պ, գնդապետ, — ասացի ես յարգանքով և վճռականութեամբ, — մի քանի ժամանակ սրանից առաջ իմ բարեկամ Ժիլբէրը զիմել էր ձեզ մի նուրբ առաջարկութեամբ: Խնդիրը վերաբերում էր իմ բարեկամի և օրիսրդ դը-Գար-

դի ամուսնութեանը և Լուի Ժիլբէրը անհնարին չի համարում իւր առաջարկութեան կատարուելը, ինչու որ գուք լաւ էլք ընդունում երան:

«Մինչ ես խօսում էի, ծերունի գնդապետի դէմքից անյայտացաւ սիրալիք ու քաղաքավարի արտայայտութիւնը, տեղի տալով խորը զարմացման:

«—Դուք խօսում էք իմ աղջկայ և Լուի Ժիլբէրի ամուսնութեան մասին,—բացականչեց նա:—Եւ Փարիզի փաստաբանների ներկայացուցիչը թոյլ է տալիս իրեն այդ առաջարկութիւնն անելո՞...»

«—Ի՞նչ էք ուզում դրանով ասել:

«—Եւ սակայն գուք անպատի մարդ չէք, —շարունակեց նա, յառելով ինձ վրայ իւր աշքերը, որոնց մէջ բռնկել էք զզուանքը, —ձեր անունն յարգանք է վայելում:

«—Պ. գնդապետ, —ասացի ես, հազիւ զսպելով իմ յուզմունքը, —ինդքում եմ, անյապաղ յայտնեցէք ինձ, թէ ինչնվ եմ վիրաւորել ձեզ:

«—Դը Փարդը նորից և առաջուանից տեկի մեծ ուշագրութեամբ նայեց ինձ, իսկ ես զգալով, որ համբերութիւնս սպառում է, սառոյց կտրեցի:

«—Դուք անպատճառ ցանկանում էք իմա-

նալ, թէ ինչու ձեր խօսքերը վիրաւորեցին ինձ: Եթէ գուք անկեղծութեամբ էք խօսում, այդ ցոյց է տալիս, որ գուք չէք հանաշում այն մարդուն, որը ձեզ իւր միջնորդն է դարձրել համարձակում ևմ նկատել, որ մի մարդ, երբ խօսում է մէկի կողմից, որին շատ քիչ է ճանաշում, անզգուշութիւնն է գործում:

«—Քիչ է ճանաշում: Բայց Ժիլբէրն իմ բարեկամս է: Նրա և իմ պատիւը մէկ է:

«—Մէկ է:

«—Այն, և գուք չը պէտք է այլ ես տանչէք ինձ, ծածկելով այն բանի պատճառը, որը ստիպում է ձեզ մտածելու, թէ իբր ես գալով ձեզ մօտ Լուիի կողմից, պատուի օրէնքը ոտնատակ եմ տուել: Ես չեմ ճանաշում մի աւելի պատուական, մեծահոգի և աղնիւ մարդ, քան իմ բարեկամս է, որի խնդիրը գուք որպէս վիրաւորանք էք ընդունում:

«—Ես տեսնում եմ, —ասաց գնդապետը կալվելով, —որ սխալուած եմ ձեր վերաբերմամբ: Դուք ոչինչ չը գիտէք և գա արդարացնում է ձեր միջնորդութիւնը: Խնդրում եմ ներեցէք ինձ այն բոլորի համար, ինչ որ ասել եմ յատկապէս ձեր անձի մասին:

«—Սպասեցէք մի վայրկեան, գնդապետ: Զեր ասածն այնքան լուրջ է, որ ես յետ վեր-

ցնելով հանդերձ բարեկամիս առաջարկութիւնը, ինձ իրաւունք եմ համարում զիտենալու, թէ ինչու է վիրաւորել ձեզ այդ առաջարկութիւնը։ Ըստ երեւթին ձեզ թւում է, թէ ես եկել եմ ձեզ մօտ պատիւն արատաւորուած մի մարդու կողմից և այժմ ես հաստատապէս մտադրուել եմ իմանալ, թէ ինչի՞ մէջն էք մեղադրում դուք նրան։ Եթէ դուք չէիք ցանկանում յայտնել այդ, ապա չը պէտք է ասէիք, թէ նրա առաջարկութիւնը վիրաւորում է ձեզ։

«Քեզապետը լրեց և յետոյ, գլուխը բարձրացնելով հարցրեց։

«—Իսկ եթէ ես հրաժարուեմ իմ ասածներից։—Թւում էր, որ նա զերմարդկային ոյժ էր գործ գնում իւր վրայ։

«—Դա ինձ չի գոհացնիլ։ Կան խօռեր, որոնք չը պէտք է արտասանուեն, բայց մի անգամ որ նրանք դուրս թռան մարդու բերանից, այլ ևս չի կարելի առանց բացատրութեան թողնել նրանց։

«—Դուք արդարացի էք, —ասաց դը-Գարդը, —բայց այժմ ես անկարող եմ ասել ձեզ աւելին, ինչու որ տեսնում եմ, որ տիսուր ճըշմարտութիւնը բոլորովին անյայտ է ձեզ։ Երեք օրից յետոյ դարձէք ինձ մօտ և ես խոստանում եմ ամեն բան որոշ ասել ձեզ։

«—Մի խօսք էլ. դուք ցանկանում էք փաստեր հաւաքել անձնապէս Լուի Փիլբէրի դէմ։

«—Եղել են բովէներ, երբ ես կասկածել եմ նրա վրայ, —պատասխանեց դը-Գարդը, —բայց այժմ, նայելով ձեզ, ինձ թւում է, որ ես սխալուել եմ և ես ենթադրում եմ, որ Լուի Փիլբէրը բազդի զոհ է... ես խորապէս ափսոսում եմ նրան։

«—Ուրեմն, գնդապետ, —վրայ բերի ես, —ինդիրը վերաբերում է նրա մերձաւորներից մէկին, նրա մծըրը, կամ հծըրը, կամ զուցէ միմիայն մծըրը։ Նա ատօրինի զաւակ է։ Ամբողջ գալտնիրը դրա մէջն է, հա՞։

«Ես ուրախացած շռնչ քաշեցի, համոզուած լինելով, որ ինձ յաջողուեցաւ բարձրացնել զալտնիրի վրայից վարագոյրը։

«—Միթէ դուք ինձ ընդունակ էք համարում այն բանին, որ ես կը մեղադրեմ մարդուն նրա ատօրինի ծնուելուն համար, —վրայ բերեց դը-Գարդը։—Ես արդէն ասացի ձեզ, որ վաղը չէ միւս օրը բացատրութիւն կստանաք։ Ինդրում եմ, հավատակուեցէք իմ վճռին, որից ես յետ չեմ կանգնիլ։—Եւ նա կանգնեց, իմաց տալով, որ մեր տեսակցութիւնը վերջացած է։

«Ես անմիջապէս գնացի Լուիի մօտ, որը

սպասում էր ինձ Soufflot փողոցում։ Տար ըստէից յետոյ ևս արդէն նրա մօտն էի։

«Գնդապիտ գլ-Դարդը կտրական կեր կերպով մերժում է ձեր առաջարկութիւնը, — ասացի ես, հաւաքելով բոլոր ոյժերս, — բայց ինձ թում է, իմ գժրադր բարեկամս, որ ձեր այսքան ժամանակուայ տանջանքները շուտով վերջ կանենան։ Վազը չէ միւս օրը ես կիմանամ ձեր տանջանքների սոսկալի, բայց լիովին որոշ պատճառը։

«Լուին լսում էր ինձ սարսափելի հանգըստութեամբ։

«Այսպէս ուրեմն, ես շը սխալուեցայ, — ասաց նա, — իմ մերձաւորներիցս մէկի վրայ մի սոսկալի արատ կայ ծանրացած։

«Ես լուռ էի։

«— է՞ն, ինչ կայ որ; աւելի լաւ, ես գերադասում եմ ոչ առանց պատճառի տանիքուելը։ Ես անհունս ցանկանում եմ, որ իմ խորտակուած կեանքի, իմ անապատիւ դարձած գոյութեանս գաղտնիքը բացուի։ Ամեն բան, ամեն բան լաւ է անյայտութիւնից։ Ա-խ, բարեկամս, չնորհակալ եմ ձեզնից։

«Իմ սիրտը կոկծում էր նրա խօսքերից։

«— Փիլիքը, — ասացի ես, — գնդապիտ եր է, որ անձնապէս ձեր գէմ ոչինչ շունի,

«— Լաւ, բարեկամ, խորապէս չնորհակալ եմ ձեզնից և զիտեմ, թէ ինչ է մնում ինձ անելու այսուհետեւ։

«— Ես ոչինչ շը զտայ պատասխանելու։ Ես զիտէի, որ նա միայն ձգտում էր այն ըստէին, երբ պիտի բացուէր սարսափելի գաղտնիքը։ «Ուրեմն, — մտածում էի ես, — նա ինքնասպանութիւն չի գործիր։ Յետազայում ես իմացայ, որ Լուին ոչինչ չէր ասել տիկին Ժիլ-րէրին։ Պարոններ, ես կրծատում եմ այս տխոր պատմութիւնը։ Որոշեալ օրը ես գնդապիտի մօտ էի։ Նա ընդունեց ինձ խիստ լուրջ, նոյն խել տխուր գէմքով և պահանջեց, որ ես խօսք տամ, թէ ոչինչ չեմ ասել Լուիին։

«— Գուր փաստաբան էր, — ասաց նա, — և անկեղծ կը լինիմ ձեզ հետ, եթէ խօսք տաք ինձ, որ ինչ որ պատմելու եմ ձեզ, գաղտնիք կը պահէր։

«— Բայց, գնդապիտ, — վրայ բերի ես, — ես եկել եմ ձեզ մօտ ոչ որպէս փաստաբան։ Մտածեցէր, չէ որ այն գժրադր ինձանից է սպասում կը ապրելու կամ մեռնելու վճիռը։

«— Դրա համար էլ ես կը խօսիմ ձեզ հետ անկեղծութեամբ, եթէ միայն խօսք տաք լը-ռելու։

«Ի՞նչ պէտք էր անել, պարոններ, ես

խոստացայ լռել, չիմանալով, թէ ինչպէս կը պահէի խօսքս և մի քանի բոպէից յետոյ ես իմացայ այն սարսափելի և զգուելի հանելուկը, որը թունաւորել էր Լուի Ժիլրէրի օրերը:

«Դուքս գալով գը-Գարդի տնից, ես խելագարի նման փախայ Փարիզից: Ես ցանկանում էի, որ Լուի Ժիլրէրը կորցնէր իմ հետքը: Ես այնշափ սարսափած էի գնդապետի պատմաց, որ չէի ցանկանում պատահել իմ դժբաղդընկերոջս: Այդ սոսկալի պատմութիւնը կարող էր սպահնել նրան և ես ոչ մի կերպ չէի համաձայնիլ պատմել նրան: Երգումը հարկադրում էր ինձ լուռ մնալու, բայց հինց առանց այդ էլ ես անկարող էի նրան որ և է բան յայտնելու...

«Ամբողջ մի շաբաթ Լուին որսնում էր ինձ: Յետագայում նա ինձ ասաց, որ անշուշտ, իւր ուղեղը ժամանակաւորապէս խանգարուել էր և այդ դրութեան մէջ նա հետը շարունակ պահում էր լցրած ատրճանակը (այն միենոյն ատրճանակը, որն ահա, ձեր առաջն է, որպէս ապացոյց սպանութեան), որպէսզի դէմ գնելով կրծքիս, հարկադրէր ինձ ասելու ճշմարտութիւնը, և ապա վերջ գնէր իւր կեանքին: Իւր անխելը պտրառումների ժամանակ նա պատահում է իւր նախկին ընկերներից մի քանի-

սին, որոնք ենթագրելով, թէ նա իւր խելքը կորցրել է անյաջող սիրուց, առնում են նրան իրենց խնամակալութեան նկրքոյ: Մի երեկոյ, տեսնելով նրան սովորականից գուրս գրգռուած գրութեան մէջ, ընկերներն համոզում են նրան մանելու անառակութեան շքեղ պալատներից մէկը, որ գտնում էր Jolibert փողոցում և աշքի էր ընկենում իւր հոյակապութեամբ: Նրանց տանում են մի մեծ սենեակ, որի պատերից մէկի վրայ փայտէ գեղեցիկ շրջանակի մէջ կախած էր մի մեծ պատկեր, որը ներկայացնում էր Լեդային և Կարապին: Յանկարծ հարեան սենեակից լուռում է մի ձայն և Լուիին ցնցւում է:

«—Այդ նով է խօսում,—բացականչում է Լուին, կարծես յանկարծակի կատաղելով:

«Նրա բարեկամները ծիծաղելով ստիպում են նրան նստել իւր առաջուայ տեղում:

«—Միամիտ երիտասարդ, հանգստացիր, դու կտեսնես նրան, նա իսկոյն կը յայտնուի. Դա այս անառականոցը պահող կինն է:

«—Ճնաւ, շտապեցէր, շտապեցէր, աղջիկներ, —շարունակում է նոյն ձայնը, որ Ժիլրէրը լուռում էր, թուի թէ, երազի մէջ:—Գահվծում հիւրեր կան, խնդրում եմ, ձեզ կարգին պահեցէր:

«Մի անբացատրեկի յուղմոնք բռնում է

Լուիին և նա բարձրանում է տեղից։ Վերջապէս գուռը բացւում է և չէմքի վրայ երկում է կինը։ Լուսում է կրկնակի ազաղակ։ Այն կինը, որին տեսնում է Լուին, միանդամայն բացարում է գժբաղդ երթասարդին իւր կեանքի խորտակման ամբողջ գաղտնիքը։ այդ անիծուած տան կառավարչուհին նրա մայրն էր... նա կանգնած էր որդու առաջ նոր կերպարանըով, այդքան ցած, հրէշաւոր և զգուելի կերպարանքով...

«Նա նայում է որդուն նոյնպէս սարսափից օրաբանալով՝ կաթուած ստացածի նման և ահա, Լուին հանում է գրապանից ատրճանակը և սառնարինութեամբ նշան է գնում այն անպատի կնոջն ու արձակում... Տիկին Ժիլբէրը, կամ աւելի ճիշտը՝ Ժիրօդոն ընկնում է գետնին երկու քայլ հնուռ որդուց, որը ստրու հրում է նրան մի կողմ։ Տասը բուպէից յիտոյ նա մեռնում է առանց ուշրի գալու։

«Այդ ժամանակ ես Բրիքսէլումն էի և հէնց հետեւեալ օրն իմանալով Յոլիբեր փողոցում տեղի ունեցածը, շտապում եմ վերադառնալ Փարիզ։

«Պարոններ, ես չեմ ասիլ ձեզ այն բանը ֆրազը, թէ դրէք ձեզ այն մարդու տեղը, որին դատում էք։ նա բացառութիւն է կադ-

մում... Աշխարհիս մէջ կան արարածներ, ուրոնք գոհ են գնում ուրիշների յանցաներներին՝ խարայէլի քաւութեան նոխազի նման։ Նրանց ամբողջ կեանքը մի անգութ ծաղր է։ Ժիլբէրի համար այս աշխարհում տեղ չը կար։ Ուրեմն ես չեմ խնդրում ձեզ, որ թեթեացնէք նրա պատիժը։ Խնդրում եմ ձեզ, խիստ պատժեցէք նրան, դատապարտեցէք մահուան։ նա պատկանում է այն մարդկանց կարգին, որոնք հէնց երեխայութիւնից գատապարտում են բաղդի անողաք իրաւասութեանը, որը քշում է նրան անդունդի մէջ՝ մի տերեկի նման։ Կրկնում եմ, ես չեմ ուզում շարժել ձեր սիրտը, յառաջացնել ձեր մէջ կարեկցութիւն, որ շատ ընական կը լինէր պայծառ անցեալ ունեցած մի երիտասարդի նկատմամբ։ Ինձ համար հեշտ է ըռպէշական կարեկցութիւն զարթեցնել ձեր սրբութերում, որի օգնութեամբ ես, շատ կարելի է, կարող կը լինեմ արդարացնել իմ քվենտին, բայց ես այդ չեմ ցանկանում։ Ես պատրաստ եմ պոռալու ձեր առաջ յանուն այն անբաղդ մայրերի, որոնց աղջիկներին ծախում էին տիկին Ժիրօդոյի միջոցով։ «Նա լաւ է արել, որ սպաննել է իւր մօրը»։ Գիտենալով, որ օրէնքը դատապարտում է նրանց, որոնք սպանութիւն են գործում, շատ կարելի է, գուք տարօրինակ

կը համարէք իմ խօսքերը, բայց ես ցանկանում եմ ասել ձեզ. «Եթէ դուք ցանկանում էք քաւութիւն, ապա դատապարտեցէք նրան ապրելու, ինչու որ կեանքը նրա համար մի ծանր բեռն է լինելու։ Թող նրա թափած արիւնը լուանայ իւր ծագման արատաւոր բիծը։ Նա սարսափով հրաժարուել է ցած և անազնիւ միջոցներով դիկուած հարստութիւնից։ Ազքատութեան լայն դռնից դարձրէք նրան դէպի կեանքը և այն նոր պարտականութիւնները, որ դուք կը դնէք նրա վրայ, թնդ ստեղծեն նրա համար նոր պատասխանատւութիւն։»


«Ահա թէ ինչի մասին ես կը խնդրէի ձեզ, պարզներ, փոխանակ ազաշելու, որ ի նկատի առնելով նրա բացառիկ դրութիւնը՝ ներէք նրան։ Բայց ես զգում եմ, որ այսպէս խօսելով, ես խիստ մեծ բան պահանջած կը լինէի ձեր ընտանեկան աւանդութիւններից, որի համար էլ հինգ կուին վրէժ է լուծել։ Որդին սպանել է մօրը, ուրեմն պէտք է մեռնի նա, այսպէս են վճռել աստուածները, օրէնքների պաշտպանները։»

«Ես վերջացրի և այժմ յանձնում եմ նրան ձեզ։ Կատարեցէք ձեր պարտքն առանց քինի, այլ և առանց թուլութեան, բայց թնդ դոնէ ձեր վճիռը պատճառարանուած լինի։ Մի դա-

տապարտէք նրան այն բանի համար, որ նա դժբաղգութիւն է ունեցել ծնուելու մոլեոանդութեան չափ պատուասէք հոգով, որ դուք էլ ունէք։ Նա չը գիտէք, որ մի քանի զգացմոնքներ, ինչպէս նաև մի քանի արտօնութիւններ սեպհականութիւն են որոշ շրջանի մարդկանց։ Նա մոռացել էք, որ դժբաղգը չը պէտք է համարձակուի կրելու իւր սրտում պատուի զգացմոնքը, որ պատիւը նրա համար մի խաբուսիկ գանձ էք, որով նա հրճում էք ուրիշների հաշուին, որ գա ձեր՝ հասարակութեան արժանապատւութիւնը պաշտպանողներիդ սեպհանութիւնն է, որ նա գողացել էք։ Լուի Ժիլբէրը չը գիտէք, որ ինքն իրաւոնք չունէք լինելու ազնիւ, մեծահոգի նրբազգաց, որ նրան չէր վայելում, որպէս արժանաւոր ընտանիքի զաւակին է վայելում, զարդարել իրեն այնպիսի յատկութիւններով, որոնք ազնուացնում են մարդու հոգին։ Աւազ, բարւոյ մասին ունեցած աւելի քան բարձր ասպետական կուլուս և կեղտի նկատմամբ ունեցած զգուանքը դարձրին նրան ոճրագործ...»

«Եթէ դուք տեսնում էք նրա մէջ կարեկցութեան արժանի հոգի, ապա մի դատապարտէք նրան տաժանակիր աշխատանքի, աւելի լաւ է թողէք կախաղանը արիւնով մկրտի նրան, 3*

ինչու որ այդ մաքուր հոգու համար կեանքը
ոչնշութիւն է և միայն պատիւն է նրա համար
կեանք կազմում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0317181

6797

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

Դիմել հրատարակչին հետեւալ հասցեով՝ Բա-
լախան, Կոնтора Մ. Ա. Կալանտարովա,
Զахару Եգիանցу.